

ՀԱՆՈՐ ՆԱԼՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՉԱՓԱՔԵՐԱԿԱՆՔԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Շ. Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

LVIII դարի առաջին հիսնամյակում Մխիթար Սեբաստացու և մխիթարականների մշակութային շարժմանը զուգահեռ արմատավորվում, ծավալվում է նաև Հովհաննես Բաղիշեցու և Հակոբ Նալյանի կրթական շարժումը:

Հակոբ Նալյանը, որ Հովհաննես Բաղիշեցու դպրոցի բազմաթիվ ուսումնասինչ աշակերտներից մեկն էր, դարձավ իր ուսուցչի լուսավորական գաղափարների շարունակողը Պոլսում: Նալյանը ծնվել է 1706 թ. Տևրիկ նահանգի հյուսիս-արևելյան մասում գտնվող Զրմառա (Զիմառա) գյուղում: Կրթությունը նա ստանում է Բաղեշի Ամողուլու դպրոցում, ուր զուցաբերում է արտակարգ բնօրինակություններ արտաքին և ներքին գիտությունների ասպարեզում և դրավում իր ուսուցչի ուշադրությունը: 1741 թ. Հովհ. Բաղիշեցին Նալյանին է վստահում Պոլսի պատրիարքարանի առաջնորդությունը. Նալյանը թեև նպատակ ուներ միայն դիտություններ դրադելու, բայց անկարող մերժելու մեծահամբավ իր ուսուցչի առաջարկը, համաձայնում է: Շուրջ 23 տարի նա գլխավորում է Պոլսի պատրիարքարանը: Նալյանը բուռն գործունեություն է ծավալում երեք հիմնական ուղղություններով՝ ուսումնակրթական-դաստիարակչական, հրատարակչական-տպագրական և դիտական-ստեղծագործական: 1741 թ. նա հիմնադրում է Գումգափուի մայր դպրատունը, որը մի նշանակալից երեւոյթ էր պոլսահայ կյանքում: Նալյանը դպրատան տեսուչ է կարգում հրոշակավոր բանաստեղծ, գիտնական Պաղտատար Դպրին և նրա հետ միասին վարում են դպրոցի ողջ ուսումնակրթական աշխատանքը: Մայր դպրատանը վերակենդանանում են հայոց անցյալի նշանավոր դպրոցների և համալսարանների ուսուցման կարգն ու սովորությունները, խորը հիմունքների վրա է դրվում եռլակ և քառլակ գիտությունների ուսուցումը: Գումգափուի մայր դպրատան հոշակը տարածվում է Պոլսում և ողջ արևմտահայաստանյան մեջ. այն դառնում է ժամանակի երկրորդ նշանավոր դպրոցը Մխիթարյան վարժարանից հետո: Այստեղ են կրթություն ստանում և ապա պաշտոնավարում բազմաթիվ անվանի հայ գործիչներ՝ Հարություն Բասենցին, Թագավոր վարժապետ, Զաքարիա Կաղզվանցին, Պողոս Տիվրիկեցին, Հարություն Կարնեցին և այլք: Հարություն Կարնեցին թողել է այդ դպրոցի վերաբերյալ մի շարք բանաստեղծություններ (անտիպ). դրանցում արտացոլվում է Գումգափուի մայր դպրատան շուրջ 50 տարվա կյանքի պատմությունը. «Յառաջին մեղ այսմ բարույց եղանակ», «Աղգին հայոց սա վարժարան», «Աշակերտ դգաստ, քարշի միշտ իմաստ» խորագրերով նրա երգերը մեզ հաղորդում են Գումգափուի մայր դպրոցի հիմնադրման, նրա ուսումնակրթական և դաստիարակչական աշխատանքի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ: «Եթէ ոք եղեն գրվաւրսւպէս պատճառ հաստատութեան դպրատանս, ոտանաւորս ցուցանի և ոտանուն նոցա զլիսատառքն յայտ առնեն. եղև ի 1241 թուականին հայոց և ի 2 ասորիլի ամսոյն յաւուրն աւագ ուրբաթի»: Այս ընդարձակ խորագրով բանաստեղծության մեջ Հարություն Կարնեցին երախտագիտության և մեծարանքի չեքմ տողեր է նվիրում Հակոբ Նալյանի, Պաղտատար Դպրի անմոռաց հիշատակին:

Առտուա՛րբան Յակոբ պէտն սրբազան,
Եղեալ պատճառ և արբանհակ յայկազեան,
Եւ թէ բանիւ և թէ արդեամբ բաւական,
Հաստատելոյ զուսումն ետալ անխափան:

Կացոյց ի սա կառաւարիչ հոգածու,
 Զոմն սոփեստ յոյժ քաջակիրք մանկածու,
 Հոմերական ուսամբ լինիր նա ուժտու,
 Տոմիս մանկանց, որոց միտքն են լուսատու:

Որոյ անուն յորջորջէին Պաղտասար,
 Ի քաղաքէն, որ այժմ անուանի Կեսար,
 Քերթողական արուեստիւ լեալ յոյժ նարտար,
 Որ ոչ սակաւ ազգիս գտաւ մխիթար¹:

XVIII դարում Մխիթար Սեբաստացուց հետո նալյանն է, որ գործնական հողի վրա է դնում աղջիկների կրթության գործը: Գումգափուի մայր դպրատանը կից, 1745 թ. նա բացում է նաև օրիորդաց դպրոց: Կանանց դատելի պաշտպանը այս հարցը բարձրացնում է նաև իր հրապարակախոսական հոդվածներում: Հետևեցեք «կրթել տալոյ և զաղջկունս ուսման», — դիմում է նա «այրերին» «Մի՞թէ նոքա իմացական հոգի չունին, որ... դտեսածն միայն ուսանին՝ իլիկ մանել, քէռկէֆ բանիլ, տուն աւելել, լաթ լուսնալ, ծուր ծամել և այլ աւսպիսի անբան արհեստք կիր առնու... Մի՞թէ չարժէր գրոց գիտութիւնն քան զմէկ իլիկ մանել, և ո՛չ թէ մեք գիլիկ մանելն մէն առնել կամիք ի նոցանէ, հէմ դայն թող ուսանին, հէմ դայն... Վասն որոյ աղաչեմ, թէ և աճայիս և անսովոր երեւի պատուիրանս, զգստերս ձեր մի՛ արգելուք յուսմանէ սուրբ գոսց և ի կարգացնելոյ»²:

Նալյանը արտակարգ եռանդով (չնայած իր թույլ առողջությանը) խորամուկ է լինում նաև տպագրական, հրատարակչական աշխատանքների մեջ: Լավագույն գրքերի թարգմանություններն գործում նա իրեն աջակից է ընտրում օտար լեզուների հմուտ գիտականեր Դուկաս Խարբերդցուն և Հակոբ Լենճեկյանին. վերջինս Նալյանի հանձնարարությամբ թարգմանում է նաև «նյութոսի օրենքը»:

Ժամանակակից վարքագիծների տեղնկությունների համաձայն, միայն Նալյանի գրչին պատկանող ինքնուրույն և մեկնողական աշխատությունների թիվը հասնում է երկու տասնյակի. «Արաբ դերկոտասան հատորք գիրքս շարագրեալ լինքենէ, որք են այսօրեկ՝ նախ Վէմ հաւատոյ կոչեցեալ գիրքն, Քրիստոնէականն ուսանելին...», Համառօտութիւն Ոսկեբերանին ոտանաւոր բանիւք, Նարեկայ մեկնութիւնն, Ճրագ ճշմարտութեան կոչեցեալն, Ժամամուտ կոչեցեալն, Գանձարան ծանուցմանց դիրքն կապակցեալ ընդ պատմագրքին աղգաց և թագաւորաց և պատմութեան աշխարհի ազգին մերոյ թագաւորութեան, Զին հոգեւոր գիրքն... բոլոր Տարեկան Քարոզգիրքն, Խորհրդոց գիրքն, Սիրբբայ մեկնութեան գիրքն, Գիրքն միւս՝ Հաւաքմունք պետական իրաց կոչեցեալ և այլք»³: Այստեղ պետք է ավելացնել նաև Նալիկի «Եղծ աղանդոցի» հրատարակությունը (սեղմ առաջաբանով) և բազմաթիվ ձեռագիր այլ աշխատություններ՝ «Ասացուածք փիլիսոփայից», «Կտակ շարչարանաց», «Բանք բնախօսից ոմանց իմաստասիրաց», ստվարահատոր ինքնագիր «Նամականին» և այլն: «Ի մատենիս են Նամականիք Յակոբայ աստուածաբան պատրիարքի գրեալ յերուսաղէմ իւրում պատրիարքութեան, ի Պօլիս և այլ ուր, զոր պահելի է խնամով վասն իմաստալից ասացուածոցն և յօրինակ նամակագրութեան, ճոխ և փարթամ գրչութեան, որ լսի բարոյական և վարդապետական իմաստ բաղում»⁴:

Մեծածավալ և առավել քան արժեքավոր է Նալյանի մի այլ անտիպ աշխատությունը, որ կոչվում է «Աշխարհացոյց»՝ «Ծիհսննամայ». այս երկի

¹ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 8216, էջ 225ա (այսուհետև կնշվի միայն ձեռագրի համարը և էջը):

² Հ. Նալիկան. Գիրք կոչեցեալ Գանձարան. Պոլիս, 1758, էջ 81—83:

³ Ձեռ. № 4575, էջ 11ա-բ:

⁴ Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց. հ. IV, Երուսաղեմ, 1969, էջ 360:

ինքնագիրը պահվում էր Ղալաթիո աղգային մատենադարանում. Բարկեն Կաթողիկոսը իր մանրակրկիտ նկարագրության մեջ հանգում է այն եզրակացության, որ Նալյանի այս գործը «աղերս մը ունի նույն ինքն Նալյանի Գանձարան ծանուցմանց անուն գրքի... հետ»⁵։ Բանասերը հայտնում է նաև, որ գա միաժամանակ անկախ և ավելի ընդգրկուն աշխատություն է՝ հեղինակի ևրկար տարիների ծանր ու տքնաջան աշխատանքի արգասիքը։ Այս մասին իր հիշատակարանում խոսում է նաև Նալյանը։ Հայոց կրթական, լուսավորական գործի ջատագովը ազգը մասավոր թմրությունից հանելու, նրա դավաններին աշխարհաճանաչ դարձնելու նպատակով է ձեռնարկում այս ծանր աշխատանքը, «թէպէտև խուժանիցն կուտեցմունք զմեօք և հոգք ամենից... իբրև զսամեհի ալիս լուկիանոսում ծովու կենցաղոյս, զմեօք ժփանային և յանսովոր փորձութիւնք զմեզ վիճահարս առնէին. սակայն կամելով իմ սպելանի ինչ կազմել դատարկաբանութեան ալգիս,— գրում է նա,— որ չոր ուսմանց կործանելի աշտարակն է և քաջակրթիչ գարոց մոլութեանց, վասն այսորիկ զկնի զգլխաւորացն աշխարհի մասանց խօսելոյ է վերջնում հատորի Գանձարան ծանուցմանց կողեցեալ գորոյս և ի ճիհանամայէն այլազգաց, թէ ի թարգմանեցելոց ի լաթինաց և թէ ի շարագրելոյն յինքեանց, կամեցաւ և զղլխաւորացն և զմասանցն աշխարհի պարունակելոց ի Մեծն Ասիա հարանատեսօրէն, որքան և կարելի էր անցանել, որ և անցի իսկ յրտեսելով»⁶։

Աշխատությունը բաղկացած է 22 մասից և կազմում է 471 էջ, պատմա-աշխարհագրական կարևոր տեղեկություններ է պարունակում Ճապոնիայի, Չինաստանի, Հնդկաստանի, Պարսկաստանի, Անատոլիայի, Հայաստանի և այլ երկրների մասին։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում թե՛ այս գրքում և թե՛ «Գանձարան ծանուցմանց» գրքում (տպագրված 1758 թ. Կ. Պոլսում) տեղ գտած հայոց պատմության և աշխարհագրության, հայկական գավառների, քաղաքների, լճերի և հարյուրավոր վայրերի վերաբերյալ եղած փաստերը։

Անկասկած Նալյանի գրչի արդյունք է նաև Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» պոեմի համաբարբառը։ «Նարեկի համաբարբառը,— գրում է Բարկեն Կաթողիկոսը Ղալաթիո մատենադարանի № 28 ձեռագրի նկարագրության առթիվ,— ամենայն հավանականությամբ Նալյանի աշխատության արդյունքն է, դրո կրնայ պատրաստած ըլլա իր «Մեկնութեան» դբաղած ատեն։ Այդպիսի տաժանակիտ աշխատության մը, Նալյան միայն կրնար անձնատուր ըլլալ, իր ցավերը մոռանալու համար»⁷։

Իսկոն գրական-ստեղծագործական, հրատարակչական աշխատանքների հետ միասին Նալյանը խորապես ապրում է հայ համայնքի կյանքով, նրա ցավերով ու հոգսերով։ Իր ունեցվածքն ու խնայողությունները Նալյանը նվիրաւրելում է ազգօգուտ նպատակներին՝ Սկյուտարում աղբյուր կառուցելու, աղբաւղստերաց օժիտի, աղբատ երեխաների կրթության, իր ծննդավայր Զիմառում հյուրանոց կառուցելու՝ «վասն եկաց ճանապարհորդաց ի Զիմառս», նույն գյուղում մի . ողբյուր և մի ջրաղաց շինելու՝ «զի մի նեղութիւն կրիցեն գիւղացիքն երթալով ի հեռի աղբիւրս և ի ջրաղացս» և այլն⁸։

1764 թ. մայիսին Նալյանի հիվանդությունը սաստկանում է։ Նա իրեն փոխանորդ է ընտրում Գրիգոր Պասմաճյանին։ Վերջինս, հաշվի առնելով ժամանակի խառն իրադրությունը, հրաժարվում է. «Յոչ մտանել քո յայս պաշտօն՝ անընտել ոք սպրդեալ ի ներքս՝ վեր ի վայր տապալեսցէ դիաղաղութիւն ազ-

⁵ Նույն տեղում, էջ 12ա։

⁶ Բարկեն Կաթողիկոսի կաթողիկոս. Յուզակ ձեռագրաց Ղալաթիո աղգային մատենադարանի. Անթիլիաս—Լիբանան, 1961, էջ 414։

⁷ Նույն տեղում, էջ 114։

⁸ Ձեռն. № 4575, էջ 11բ--12բ։

գին...»⁹, — հանդիմանում է նրան Նալյանը: Գր. Պասմաճյանը արտասուքով խոնարհվում է նրա առաջ և համաձայնվում: Նալյանը մայիսի 13-ին հրավիրում է պատրիարքարանի մեծ ժողով, որին մասնակցում են ավելի քան 100 (պաշտոնատար անձինք: Նա հանդես է գալիս մի ընդարձակ ճառով և անգրադատնալով հայ համայնքի առջև դրված խնդիրներին՝ քարոզում է «բանս յոժարականս, յորդորականս, խրատականս և ղգուշացողականս և մանաւանդ ի վերայ սիրոյ և միաբանութեան...»¹⁰: Երկու ամիս անց, 58 տարեկան հասակում Նալյանը վախճանվում է:

* * *

Հակոբ Նալյանը թողել է մեծ անուն և մեծ վաստակ: Հայագետ Բ. Կյուլենսերյանը նպատակ է ունեցել ընդարձակ աշխատություն գրել Նալյանի մասին, բայց ըստ երևույթին չի հասցրել իրագործել: Նա գրել է «Նալյան և Նարեկացի» հոդվածաշարը: Ուշագրավ մի ուսումնասիրություն, թեև ոչ սպառիչ: Լեոն իր «Հայոց պատմություն» մեջ շատ բարձր է գնահատում Նալյան հայագետին: Կատմաբանին նրան համարում է «Բաղեշի գրական դպրոցի ամենաբարձր արտահայտությունը: «Ալնպես որ, — գրում է Լեոն, — մենք կարող ենք ողջունել հայոց ամբողջական պատմության փոքր ի շատ է հաջող առաջին փորձը: Հալ աշխարհին և հայ անցյալին Նալյանը վերաբերվում է հայրենասիրական ակնածությամբ և պարծանքով է նկարագրում նախնիքների քաջությունները, երկրի փառքը»:

Նալյանին բարձր են գնահատում նաև Չամչյանը, Օրմանյանը, Կապասաբայանը, Ակինյանը, Ալպոյաճյանը, Սիրունին և ուրիշներ: Այս բոլորով հանդերձ, Նալյանը իր անձի և վաստակի լիարժեք գնահատությունը չի արժանացել նրա տասնյակ գործերը մնացել են անժանթ: Նալյանն բաղմահասոր սուլադիր և ձեռագիր գրքերով ներկայացնում է այն կարևոր օղակը, որը կապում է հայ միջնադարը նոր ժամանակների հետ: Նրա գրական ժառանգությունը թելադրում է շուտուհասիրված հարցերի մի ամբողջ շարք:

Հայ գրականության պատմության մեջ գրեթե չի հիշատակվում Նալյան րանաստեղծի անունը: Լեոն, որին մեծ գոհացում է տալիս Նալյան գիտնականը՝ իբրև հայոց ազգային ամբողջական պատմության առաջին ստեղծող, չի շոշափում այս հարցը: Բ. Կյուլենսերյանը «Նալյան և Նարեկացի» հոդվածաշարում չի անդրադառնում Նալյան բանաստեղծին, թերևս մենագրության ծրագրի մեջ առնելու նկատառումով:

Ժամանակակիցներին, սակայն, Նալյանը քաջ հայտնի է եղել և՛ իբրև ավդային խոշոր գործիչ՝ «գազաթ պետական», և՛ իբրև աստվածաբան-փիլիսոփա՝ «նուրբ իմաստական», և՛ իբրև բանաստեղծ՝ «ներհուն շափաբան»: XVIII դարի «հետնեալ բանասէր», «գրիչ և նօտար» Եսայի Կոստանդնուպոլսեցին այսպես է գնահատում նրան.

Այրն այն հմուտ և խոհական,
Ծանօթ գրեանց կենսունական,
Ալև տուրից արտարական,
Տիրաշնորհ գերրնարական,
Բարուն Յակոբ այր վհարան,
Որոյ հուշակն է ազգն համայն¹²:

⁹ Մ. Չամչյան. Պատմություն Հայոց. Կ. Գ. Վենետիկ, 1786, էջ 873:

¹⁰ Բ. Կ. Կյուլենսերյան. Հիշատակարան Պասմաճյան Գրիգոր վարդապետի. Կ. Պոլիս, 1908, էջ 16:

¹¹ Լ. Լ. Լ. Հայոց պատմություն. Կ. Գ. Երևան, 1946, էջ 953: Երբ հոգվածն արդեն հանձնված էր տպագրության, մեծ հայտնի դարձավ, որ բանասեր Գևորգ Բամպուճյանը Ստամբուլում, 1981 թ. տպագրել է «Հակոբ Նալյան պատրիարք» գիրքը, որտեղ օգտագործված են նաև Մաշտոցի անվ. Մատենադարանի մի շարք ձեռագրեր:

¹² Զեռ. № 1014, էջ 960: Մատենադարանի № 1016 ձեռագիրը Նալյանի «Մեկնություն Սիրաբայ» ինքնագիր օրինակն է, գրված 1741 թ.: Այստեղ կա նաև հեղինակի դիմանկարը:

Այսպես է գնահատում Նալյանին նաև ժամանակակից գրիչ, բանաստեղծ Աստվածատուր Ծաղիկ մականվանյալը:

Նալյանի բանաստեղծական վաստակը ներկայացնում են հարյուրավոր երկտողյակներ և քառյակներ, մի քանի տասնյակի հասնող ներբողներ, իրատական, նկարագրական ընդարձակ բանաստեղծություններ, պոեմներ և շուրջ 50 հայատառ թուրքերեն քնարական, խրատական երգեր: Նալյանի չափաբերական քին հատուկ են կյանքի գեղարվեստական ճանաչողության իրական, առարկայական ըմբռնումը, նյութի, հարցերի բաղադրանքները, շարադրանքի բանաստեղծական չափի ու հանգավորման պարզ արվեստը: Այս հատկություններով նա առանձնանում է իր գրչակիցների մեջ, լրացնում, հարստացնում է XVIII դարի գրական անհատական բանաստեղծությունը: «Խորին իմացմամբ նիւթով պարզական» բանաստեղծություններով է նա ուղեկցում իր մեկնողական և ինքնուրույն ստվարահատուր մի շարք երկերը՝ «Մեկնութիւն աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ», «Մեկնութիւն բարոյական փիլիսոփայութեան Սիրաքայ», «Գրքուկս կոչեցեալ հոգեշահ...», «Գիրք կոչեցեալ Զէն հաւատոյ», «Գիրք կոչեցեալ քրիստոնէականի ուսանելի»: Առանձին և ամբողջական բանաստեղծություններ են՝ «Խրատական տեսրակ», «Կտակ շարշարանաց», «Առ անձն իւր», «Ունայնութիւն կենցաղոյս» և այլք... Ո՞րն է այս երկերի գաղափարական մեկնակետը, ի՞նչ իմացական խորհուրդ, ի՞նչ հայացքներ են առաջնորդում դրանց հեղինակին: Նալյանը, ինչպես Պետրոս Նախիջևանցին և իր դարի նշանավոր այլ գործիչներ, վերոհիշյալ երկերում ձգտում է միավորել քրիստոնէական ուսմունքի բարոյագիտական չափերը՝ ճշմարիտ փիլիսոփայության ու գիտության բարոյական չափերի հետ. սուրբ հայրերի, մարգարէների, առաքյալների, ընդհանուր համաքրիստոնէական մարդասիրական գաղափարները համադրում, դուգակցում է հունա-հռոմեական փիլիսոփայության, գիտության ու արվեստի նշանավոր ներկայացուցիչների՝ Արիստոտելի, Պլուտարխոսի, Հոմերոսի՝ լրիպիդեսի, էսքիլեսի, Սոֆոկլեսի, Պղատոնի, Պորփյուրի, Աղեքսանդրի, ինչպես նաև հայոց հին և միջնադարյան գիտական, փիլիսոփայական, բանաստեղծական մտքի նշանավոր ներկայացուցիչների՝ Մովսէս Խորենացու, Եղիշեի, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոսի, Ներսէս Շնորհալու, Ներսէս Լամբրոնացու, Վարդան վարդապետի, Խաչատուր Կեչառեցու, Ղուկաս Վանանդեցու և այլոց առաջադեմ գաղափարների հետ: Սրանց դեղամիջոցներով բանաստեղծը առաջարկում է բուժել հայոց ներքին խոցերը, ցրել նրան շրջապատող խավարը, միավորել ազգը: Նալյանն այս խնդիրները բարձրացնում և լուծում է գրեթե առանց աչքաբանության և, որը գլխավորն է, ժողովրդական բանաստեղծական արվեստի խոր աղղղեցության ներքո, ժողովրդի լեզվամտածողությամբ, նրա գեղարվեստական ճաշակի, ըմբռնումների համեմատ, մի հանգամանք, որ նպաստել է Նալյանի համբավին: Այս առումով շատ բնորոշ է նրա «Առ անձն իւր» բանաստեղծությունը, որն ամբողջովին արտացոլում է XVIII դարի հայոց կյանքը՝ ցավալի կողմերով:

Մենացի՛ր անձն իմ խղճալի,
Ի բարոյեանց լեալ ի բաց,
Յումմէ՞ յուսաս գրարութիւն՝
Բարեպաշտոն չի մնաց...

Իսպառ բարձեալ են իրաւունք,
Ընդ նոցին սուտ տարածեալք,
Առ մեծամեծս և առ ստրուկս՝
Ճշմարտութիւն չի մնաց:

Նղբայր-եղբօր գովամակի,
Իբր ընդ օտարս ունելով,
Ընկերն ղլնկեր ջանայ զրկել,
Սէր ընկերի չի մնաց (№ 2696, էջ 72բ, 73ա):

Բանաստեղծը քննադատում է վաճառականության անազնիվ գործարարությունը, բարբերն ու մեքենայությունները.

Համայն վաճառք խարդախամածք,
Չափ մեծ և փոքր թիւրեալք,
Տինչ ի կշիռս և ի կշորդս՝
Արդարութիւն չի մնաց:

Վաճառականք՝ ճիւրանաւորք,
Ի դաւելոյն զիւտացեալք,
Ի վաճառս զինարանաց՝
Անջուր զինի չի մնաց (էջ 72բ, 73ա):

Հոգևոր բանաստեղծը իր քննադատական գրչի մի սուր ծայրն էլ ուղղում է դեպի եկեղեցական գործիչները, դատաւարաւորում անարժան և անօրեն վարդապետներին, քահանաներին, եպիսկոպոսներին, որոնք կորցնելով իրենց բարոյական դիմագիծը՝ մեղսակից են դառնում «ազգի արյունը տղրկապէս ծղծողներին».

Ի վարդապետս եկեղեցւոյ,
Որք են հովիւք ոչխարաց,
Վասն աղատման թիւրեն դրանս՝
Ուղղութիւն չի մնաց:

Քահանայք են ստակաստաց,
Լըպըշաղէմ, լըրրենիք,
Անկեալ յարբունս ի գինաշանս՝
Ահ և երկիւղ չի մնաց:

Եռիրականք անօրէնք,
Ուղարկողքն՝ անիրաւք,
Տղրկապէս ծրծին զարին՝
Ձազգիս խնամօղ մարդ չի մնաց (էջ 73բ):

Կրօնական ծայր աստիճան խորացող պառակտումները, դավանաբանական հակամարտութիւնները ջլատում են ժողովրդի ներքին միասնութիւնը, եղծում նրա ազգային դիմապատկերը և ժամանակը չի ծնում Դավիթ Անհաղթները, որ կարողանային ճակատ տալ, մենամարտել, բացել մոլորչալների ալքերը ճշմարտութիւնը տեսնելու համար.

Հերձուածողաց ժաման գտեալ,
Կարի յոյժ կատարեցեալ,
Եւ հարկանօղ ղճակատ նոցին՝
Յաղթող Դաւիթ չի մնաց:

Յավերն ամեն կողմից կուտակվելով՝ հողմացրիվ են անում հայոց համայնքը, ողբում է բանաստեղծը, աշխարհով մեկ ցրում նրա հոտը, բայց չկա մի քաջ հովիվ, առաջնորդ, որ կարողանա իմանալ «զգալուստն զայլոց» և ժողովրդից հեռացնի, «ի տար վարի» նրանց ոհմակները.

Հօտք յանապատս ցրիւ սծեալք,
Առ ի կորուստ մոլորեալք,
Որ և գթով խնդրօղ զնոսին,
Հովիվ մի քաջ չի մնաց (էջ 73բ):

Ընդհանուր և ներքին՝ հասարակական-տնտեսական անարդարութիւնները, նկատում է երգիչը, ծնում են պատերազմներ, ազգամիջյան կռիվներ և դրանց հաջորդում են սով, համաճարակ, ժանտախտ.

Ազգ ի վերայ ազգի դիմեալք,
Ահեղ գումարք յաճախեալք,

Ամեն կուսէ մարտ, արհաւիրք՝
 Խաղաղութիւն չի մնաց:

Հրոսակը յորդեալ, աւանք քակեալ,
 Շէնք անողորմ խանգարեալ,
 Սմբակակոխ սահմանք Լոյսալք,
 Եւ այս ցաւոց դեղ չի մնաց:

Սրածութիւնք, սով և ժանտախտ,
 Արդէն դմեղ պաշարեալ,
 Քառկանակը խանգարեալք՝
 Անդորրութիւն չի մնաց (էջ 73ա—73բ):

Հասարակական, տնտեսական, առևտրական նոր բարբերը, դրամի, ոսկու պաշտամունքը, իշխանութիւնների կողմից հրահրվող դավաճանական անհատությունները, աղգամիջյան կոիվները, բնական աղետները, սովը, համաճարակը մարդուն իսպառ հեռացրել են իր պատկերից, «արի արանց հողիները բնկնվել են», մարմնական, զգացական հակամեծի ճնշումից թուլացել է միտքը, զաղափարը, եղծվում է մարդը, եղծվում են օրենքներն ու իրավունքները. այս հարցերն են մեծ կրքով ընդհանրացվում Նալյանի «Առ անձն իւր» բանաստեղծության մեջ, որը նա գրել է անկողնում, հյուծախտից բացթալված, կենսասեր, ժողովրդասեր բանաստեղծի իր հասուն գրչով:

«Առ անձն իւր»¹³ բանաստեղծության տրամաբանական զարգացումն է Նալյանի «Տաղաչափութիւն... առ ունայնութիւն կենցաղոյս...» կենսափիլիսոփայական երգը: Բանաստեղծը այստեղ առաջադրելով ունայնության հարցը, կարծես, թե «Առ անձն իւր» բանաստեղծության հերոսներին՝ «կաշառառու դատաւորներին», «ժլատ մեծատուններին», «չափ ու կշիռ թլուրոդ վաճառականներին», «դավադրութեան պլուտարարներին», «կեղեքիչներին», «իմաստակ-

13 Այս բանաստեղծության շուրջ ստեղծվել է հետաքրքիր պատմություն: Նախքան տպագրությունը (Թ ե ո դ ի կ. Ամենուն տարեցոյց». Կ. Պոլիս, 1921, էջ 16—19), այն ձեռագիր ընդօրինակություններով լայն տարածում է գտել: «Յոյժ ազգու և գեղեցիկ» այս բանաստեղծության նմանությամբ 1807 թ. մի բանաստեղծություն է հղոխում Մարգար Խոջենցը, որին պատասխանում է Սերոփքե Պատկանյանը: Ավետիք Խաղեղյանը 1857 թ. Մոսկվայում հրատարակած «Երգը Սերոփքե վարժապետի Պատկանեան» ժողովածուում գետեղում է նաև Մարգար Խոջենցի այդ բանաստեղծությունը՝ Ս. Պատկանյանի պարոդիայով՝ հետևյալ բացատրությամբ. «Աղայ Մարգար Խոջենց Ձմիւռնացի երեւելի և գիտնական Հայկազնի 1807 ամի յօրինեաց զգեղեցիկ և դիմաստալից ոտանաւոր սակս ալլալութեան ժամանակի և փոփոխութեան բարուց և վարուց մարդկան, որոյ իւրաքանչիւր տանց վեղին տողըն յանգէին բայիւս՝ չմնաց: Այս շափաբերական քերթուած տարածեցաւ ամենայն ուրեք և յամենեցունց ընկալեալ եղև սիրով և զովութեամբ, մինչև հաս և ի Տիփլիս, ուր էր յայնժամ Սերոփքե վարժապետ Պատկանեան՝ բարեկամք ոմանք թախանձեցին զՍերոփքե գրել առ այն զյարմար պատասխանի, և նա ի խնդրոյ նոցին դրէ անդէն բան առ բան, և զի ի ծայր վերջին տողից քերթուածոյ Ձմիւռնացունց ընթեռնանիր՝ չմնայ. սորայս ընդ հակառակն վերջանային՝ մնաց և զոր ինչ Խոջենցն ասէր՝ սա գրեթէ պնդէր զընդդէմն: Այստեղ կարևոր է նաև այն, որ հրատարակչին հայտնի է եղել Նալյանի «Առ անձն իւր» բանաստեղծության գոյության փաստը և այն հանգամանքը, որ Նալյանի այդ բանաստեղծության հիման վրա էլ Մ. Խոջենցը և Ս. Պատկանյանը գրել են իրենց երկերը. «Գիտնական Յակոբ պատրիարքն Կոստանդնուպոլսեցի մականուանեալ Նալեան յօրինեալ էր նախ քան զՄարգար Խոջենցն՝ զայսպիսի ինչ ոտանաւոր, զորոյ օրինակն աստ տեսի ես առ բարձրապատիւ Եփրեմ խաչակիր վարդապետի Ալթնեան և Ասպետի. որով երևի, զի Մարգար Խոջենցն զիմաստ ներկայ քերթուածոյն առեալ է անտի. կամ թէ գրուած վերջնոյն գեղեցիկ և կարի մերձ նմանութիւն է առաջնոյն՝ քաշ իմն մշակեալ» (Երգը Սերոփքե վարժապետի Պատկանեան. Մոսկվա, 1857, էջ 77): Համեմատությունը ցույց է տալիս, որ Մ. Խոջենցի «Գեղեցիկ և դիմաստաւոր» ոտանավորը «սակս ալլալութեան ժամանակի, փոփոխութիւն բարուց և վարուց մարդկան» ոչ արվեստով և ոչ էլ նյութով, զաղափարով, չի հեռանում Նալյանի երգից. ամբողջութեան մեջ իշխողը նալյանական հուսահատական տրամադրությունն է և նալյանական քննադատական ոգին. Ս.

Ներին», «պղերբ», «ըռիշտ», «սրբապիղծ տերերին», «անօրեն նվիրյալներին», «ազգի արյունը ծծող տգրուկներին» փորձում է համոզել, որ ոչինչ մնալուն չէ և ոչինչ տանելու չեք աշխարհից, որ արքայության դռները չեն բացվելու ձեր առջև... Աշխարհը անսահման է, բայց մարդու կյանքը սահմանափակ, կարճ։ Այն հավիտենականության մեջ մի շող է, «թերի մի շիթ», «նժարի ամենափոքր միավորը», կամ «ջուր գետաց անցողական», կամ «ջուր ծովի հորդ ծփական», կամ «որպէս ցօղ առաւօտեան»։ Պետք է հասկանալ այդ պարզ ճշմարտությունը և բարիք դործել շարիքի փոխարեն։

Ունայնության փիլիսոփայությունը, որ այնքան խոր ազդեցություն է գործել XVIII դարի բանաստեղծական մտքի վրա, կյանքը մերժելու, մահը, անշարժությունը խրախուսելու մղումներ չունի։ Իրականությունից ունեցած մարդու դժոխությունն է սնում ունայնության գաղափարը։ Նախանական մեկնաբանությունը նույնիսկ անցնում է հարցի իմացական ընդգրկումների ծանոթ չրջանակներից։ Բանաստեղծը կարծեք թե հանդիմանում է երկնային թագավորին, հեղեղներ, ծաղր համարում նրա կողմից մարդուն նվիրաբերված կյանքը։

Կեանքն մարդոյ իրրու երազ,
Ըստեղծողն առնէ տրնազ,
Ոչ տայ յաղուդդ թէև նրադ,
Այլ սորի միշտ իրրու աւադ...

Մարդոյ կեանքն է դիւրաց մրրիկ,
Ներհակ բախմամբ դէտ փոթորիկ,
Վարկեան ժամու տեւ փոքրիկ,
Անյայտ լինի յետայնս օրիկ։

Յայսմիկ կիտոջ յար չանալի,
Զյախտականն ըստանալի,
Որոյ երկնէ թէպէտ լալի,
Բայց վայելումն յոյժ բերկրալի (Ն՝ 9638, էջ 68բ, 69ա)։

«Կեանքն է մարդոյ իբրու երազ, Ստեղծողն առնէ տրնազ», — ակամա հիշում ես հանճարեղ Պետրոս Դուրյանին՝ «Աստծու ծաղրն է աշխարհն ալ առ»

և ողջնցը այդ բոլորը հարմարեցրել է իր ժամանակին և գրել Նալյանի երգի նմանությամբ մի այլ երգ։ Բերինք մեկ օրինակ նրանց երգերից։ Նալյանը գրում է՝

Ազգ ի վերայ ազգին դիմաւոր,
Ահնդ գումարք յաճախեալ,
Ամէն կուտէ մարդը, առհաւիրք.
Խաղաղութիւն չի մընաց (ձեռ. Ն՝ 8216, էջ 69բ)։

Մ. և ողջնցը գրում է.

Ազգ ի վերայ ազգը դիմաւոր,
Գունտը զօրաց յաճախ կուտեալ,
Յամէն կողմանց մարդ արհաւիրաց,
Խաղաղասէր տէր չմնաց։

Իսկ Ս. Պատկանյանը պատասխանում է.

Արդ ամենայն կատարեցաւ,
Աշխարհն համայն սաստեկեցաւ,
Բայց արդ, սփռիչ խաղաղութեան.
Ռուսաց մեծ կայսրն մնաց։

(Երգը Սերովբէ վարդապետի Պատկանյանն, էջ 89)։ «Առ անձն իւր» բանաստեղծությունը ձեռագրերում վերագրվել է նաև Հովհաննես Բերիացուն։

յեն»։ Նալյանի շահաբերականի նյութը, սակայն, իրական կյանքը, շոշափելի, առարկայական աշխարհն է և նրա կենտրոնում՝ մարդը, մարդու անհատականության կազմավորման, վերափոխության խնդիրը։ Ժողովրդի հոգևոր և աշխարհիկ հոգսերով հավասարապես տառապող բանաստեղծը չէր կարող մնալ ունայնության հարցի փակուղում։ Ուստի նրա «Առ անձն իւր» բանաստեղծության գաղափարները հախուռն ընթացքով ներթափանցում են նրա կրոնական, աստվածաբանական, դավանաբանական, գիտական, փիլիսոփայական բնույթի վերահիշյալ աշխատություններում՝ տեղ գտած երկտող, քառատող և այլ տեսակի բանաստեղծությունները։ Այս երկերում արդեն առավել բնորոշ օրինակներով և լայն կառավի վրա դրսևորվում են XVIII դարի հայոց սոցիալ-տնտեսական կյանքի երևույթները, հասարակական տարբեր շերտերի փոխհարաբերությունները, նրանց հոգեբանության գծերը։

Մեծատունն լիրբ բարբառն,
արբ շողոքորթ վեր հնչեն,
Աղբատի բառն, որ ոսկեայ տառ,
Դ ընդ մեկնել շամաչեն (№ 1014, էջ 327ա)։

Ո՛վ բռնաւոր, մի՛ փորձիր զոյժդ առ աղբատ,
Զի մի՛ աղօթք նորին լիցի քեզ հրատ (№ 1016, էջ 325ա)։

Դու մի՛ վիճիր ընդ մեծատան,
չի փառացաւ է՝ պայթի,
Դարձուցանէ ընդդէմ քո զվէճ,
սրով սիրտ քո խղիւսայթի (№ 1015, էջ 326բ)։

Ով ոք սիրէ դանարգ ոսկի,
Կարծէ առնել սիրոյն բաւ,
Եւ ոչ դիտէ, զի հրդեհի
Եւ շիջանի, ոչ բրնաւ (№ 6209, էջ 31ա)։

Առավել զնահատելին այն է, որ Նալյանը անմիջականորեն օգտվում է ժողովրդական հայրեններից։ Իր հասարակական-տնտեսական բովանդակությամբ քառյակները, երկտողյակները հյուսելիս, երբեմն նա նույնիսկ զուգահեռաբար օգտագործում է նաև համապատասխան հայրեններ՝ հիշատակելով թե՛ «ռամկորեն ասի»։

Ամենն ի վերայ եկին,
— ո՛ր, թէ աղւոր բան մի ասաց,
Ամենն ի վերայ եկին՝
— գնա՛, ա՛յ խենթ ու անխմաց։

Աղբատն բան մի ասաց,
Որ արժէր քան զոսկոյն կողմաց,
Հարուստն բան մի ասաց,
Որ շարժէր քան ըզվէզ մի նետաց (№ 1016, էջ 326բ)։

Հայրենների հետևությամբ Նալյանը ստեղծում է հայրենատիպ երկտողյակներ ու քառյակներ։

Աղբատն է դրախտ ի խեղճ մտաց ծաղկելի,
Ընչօղն է դրախտ՝ համայն կենօք փշալի (№ 1014, էջ 283ա)։

Հոգու և մարմնի ներդաշնակությունը, ըստ բանաստեղծի, բանական գոյի կատարելության առաջին նախապայմանն է։ Աշխատանքը, նյութական, տնտեսական բարիքը կարող է լռեցնել հոգու և մարմնի հակամարտությունները ձայնը։ Սա նոր ըմբռնում է անհատական բանաստեղծության մարզում։ Նալյանը փառաբանում է երկրագործի ազնիվ աշխատանքը. այն սնում է մարդու և՛ մարմինը, և՛ միտքն ու հոգին։

Աշխատութեամբ երկրագործեաց,
դարմանք մարմնոյն պատուաստին,
Ապաշխարեալ թէ ախորժիս,
պիտոյք հոգւոյն լնանի (N 1016, էջ 186բ)։

Երամիշտ լիւր դու ըստ հոգւոյ,
Ներդաշնակեալ յար ընդ մարմնոյ,
Հոգիդ երգող ըստ արտուտոյ,
Մարմինդ քնար բարի գործոյ (N 6209, էջ 48ա)։

Բարոյախոս բանաստեղծը իր դիտողութիւններն ուրտի մեջ է առնում նաև հայոց ներքին կյանքն ու կենցաղը, ընտանեկան բարքերը, ամուսնական, ընկերական, բարեկամական հարաբերութիւնները։

Ձարմանք են պատճառում մարդկանց փոխհարաբերութիւնները, նրանց հոգեաշխարհի նրբութիւնները բացահայտող նալյանական դիտողութիւնները։

Թշնամին քո թէ խոնարհեալ
Զոտս կամի համրուել,
Սի՛ հաւատա, ով յիմարեալ,
Զդարան կամի դքեղ փորել։

Լէ՛ր անփոփոխ միշտ ի բարին, դէտ արև
Մի՛ ըստ լուսնոյ փոփոխական և ստորև (N 1016, էջ 313ա, 295ա)։

Ոնց որ կամիս այլոց առնուլ,
Այնպէս կամիր այլոց տալ,
Զի, մի՛ իցես յառնուլն ժիր,
Եւ ի տալն՝ կարկամեալ (N 9782, էջ 91բ)։

Բարեկամ քո հնազոյն,
Դու մի թողցես ի ձեռաց,
Եվ մի նորոյն դու ցանկացես՝
Թէև դիպիս յորդ փառաց (N 1014, էջ 766ա)։

Հայոց անհատական բանաստեղծութեան մեջ Պետրոս Ղափանցոյց առաջ նալյանն է շոշափում կին և գինի զորավոր դաշինքի ավերիչ դերը։

Գինի և կին մտաց են գոլ, լաւ իմա,
Զխորհուրդ բանան՝ դքոյդ գողանալ տնիմայ (N 1016, էջ 320բ)։

Կին արբեցեալ երկագլուխ շար վիշապ,
Որ ընդ նմա վիճարանէ զկորուստ գացէ իւր շտապ (N 1014, էջ 763ա)։

Տգեղ կին իւր քեզ ցանկանէ,
Կքոյդ գեղեցիկ ի որսալ (N 9782, էջ 311բ)։

Շարժէ զգլուխ, ծափէ ձեռամբ,
Քամուս և շար թշնամին,
Տէ՛ս, պինշ տոնել սլարտիս խոկմամբ,
Կի մի անկցիս ի վարմին (էջ 313բ)։

Նալյանի չափածո խրատանքի մեջ մեծ տեղ է հատկացվում գինեմոլութեան, հարբեցողութեան դեմ պայքարի հարցին։ Բանաստեղծը անհարկի կերպով ուսումը դիտում է իբրև ազգային թերութիւն, որը մուտք է գործել նաև հոգեւոր շրջանները։

Այս է կարի անբանական,
Ի մէջ ազգին մեր հայկական,
Հարկել, յուտել յուրկական,
Ըմպել բազում, յաճախական։

Արբեցողն է զև մոլեկան,
Ոյր տենչանո զկորուստ մարդկան,

Իսկ սա՝ փորէ գդարան ինքեան,
 Հմրոնէ զինքն անելական¹⁴։
 Կամի՞ս ցնծալ սրտիւ, հոգով,
 Ա՛րբ ըզգինին հանդարտաբար,
 Կամի՞ս ողջ կեալ հոգով, մարմնով՝
 Ա՛րբ ըզսական զգաստարար (№ 6209, էջ 43ա)։

Նալյանը շուրջ 200 քառատողից կազմված իր «Խրատական տետրակում» անդրադառնում է ուսումնական, կենցաղային, բարոյագաստիարակչական այնպիսի կարևոր մանրամասնությունների, որոնք նման ընդգրկումով ու սրությամբ չեն բարձրացվել նախորդ դարերից եկող կենցաղային բանաստեղծության մեջ։ Նալյանը գիտակցաբար, անգիր անելու համար, Շնորհալու «Յիսուս Որդույ յոտիքն» է շարադրում իր այս երգը, որպեսզի «մանկունքն... կրթիցին ի կրօնս աստուածապաշտութեան ի քաղաքական վարս... Եւ եթէ դուք հետեիցիք այս խրատական տետրակիս, կարիք իմանալ թէ անցեալ ժամանակն ձեր և նարդենույս յորում կեայք»¹⁵։

Մարդու դաստիարակությունը պետք է սկսվի մանկուց, պատանեկության շրջանից, համակողմանիորեն՝ ընտանիքում, դպրատանը և հասարակական միջավայրում, «թէ ի յարտաքս և թէ ի տանն»։ Դպրոցը «ունայն դրոսանաց» վայր չէ, բացատրում է հեղինակը, այլ հոգեղեն քաղցր կերակուր, մարդու իմացական և զգացական հատկությունների կազմավորման դարբնոց, ուր պետք է իր կրթության առաջին քայլերն անի 7 տարին լրացրած պատանին։

Տարիդ եօթնեակ՝ յարմար ուսման,
 Է՛ր եղանակ իրրու գարնան,
 Անտի ըսկիդքն արար վարժման,
 Զի իցեա դու հասուն յաշնան։
 Յորժամ երթաս ի դպրատան,
 Կարծիր գրնալ ի բուրաստան,
 Կուտել զծաղիկ դու ղանաղան,
 Առնել սլոսակ քոյդ զազաթան¹⁶։

Ապա բանաստեղծը իմաստունների կյանքի օրինակներով ներկայացնում է դպրոցական մանկան ուսման, կրթության, վարքի, բարոյականության անհրաժեշտ չափերը.

Լէ՛ր աշակերտ Պիթագորեան,
 Որ եկելոցն ի դպրատան,
 Հինգ ամ պատուէր տայր լոութեան,
 Նախ ղայն կարծել ուսման արժան...
 ՅԱրիստոտէլն որ ճեմական,
 Հարցին ըզմի տարակուսան,
 ՅԱթէնս վասն է՛ր սիրեն ղկարճ բան,
 —Առաց՝ զի մերձ է լոութեան¹⁷։

Նալյանը առաջադրում է եռյակ ու քառյակ արվեստների, ճշգրիտ գիտությունների ուսուցման կարևորագույն խնդիրը ժամանակակից հայ վարժարանների համար.

Պղատոնի ի դպրատուն,
 Դրեալ այս ինչ վերա դրբան,

14 Շ. Ն ա լ ե ա ն. Գրքուկս կոչեցեալ Հոգեշահ. Կ. Պոլիս, 1746, էջ 63, 64։

15 Նույն տեղում, էջ 39։

16 Նույն տեղում, էջ 43։

17 Նույն տեղում, էջ 55—56։

Ասերկրաշափ և անրնական,
Ի՞նչ մտցել յայս ի վարժարանս՝:

Նալյանը մանկան ընտանեկան դաստիարակության, կենցաղավարության, ծնողների և դավաճանների փոխադարձ հարաբերությունների այնպիսի ներդրումն է մշակում, որոնք կիրառելի են նաև այսօր. «Հետևիցէք խրատական տետրակիս,— թախանձում է նա,— գոնէ սովաւ խրատեցէք զորդեակ ձեր», սրպեսդի նրանք չկրկնեն ձեր սխալները: Հայրերի և դավաճանների փոխհարաբերությունների հարցին Նալյանը անդրադառնում է նաև այլ երդերում: Պաշտիր ծնողներիդ, «դի են երկրորդ քնդ աստուած»: Նրանք են քո գոյության պատճառը: Ինչպես դու վերաբերվես ծնողիդ, այնպես էլ քո որդին քնդ կվերաբերվի: Խոնարհաբար հատուցիր ծնողներիդ վարձքը, նրանք ներել են քո մանկական թերությունները, դու էլ ներիր նրանց ծերունական թուլությունները:

Մնողը, զավակի երկրորդ արարիչը լինելով, իր մեջ կրում է աստծու պատկերը, բացատրում է բանաստեղծը, խոնարհվիր նրա առաջ, լսիր նրան հոտերն-կայս, կատարիր նրա բարի խրատները:

Ի՞նչ որ թողու զհայրն ի խնամոց,
Լինի յաւետ վատանուն,
Եւ ո՞ր զմայրն իւր զսոնացոյց՝
Անիծանաց լինի տուն (Ձ 1014, էջ 187ա)։

Լէ՛ր Աղեքսանդրը Փիլիպևան,
Ո՞ր միշտ ի խաղս Ոլոմպեական,
Ձինչ թագ առնէր նա յաղթական,
Հնծալիր հօրն առիթ ցնծմանս¹⁹:

Նալյանն իր խրատները հաճախ համեմտում է հունա-հռոմեական գրականության պերճախոս օրինակներով և ավանդություններով՝ մերթ Բանաստեղծական վերապատումով, մերթ՝ ուղղակի թարգմանությամբ: Իր բարոյախոսական բարոյակներից մեկը ավարտում է հռոմեական հռչակավոր Բանաստեղծ Օվիդիոսի՝ նախանձին նվիրված Բանաստեղծության թարգմանությամբ:

Նախանձն է լի դառնութիւն Լտեղեալ ի բերանի,
Նախանձոտին աչքն է թիւր, ոչ՝ երբէք ուղիղ հայի,
Ժանգոտեալ է ատամք ի մաղձին դառնութիւնէ,
Կուրծն է լի լեզի մաղձիւն ոչ պաղեալ յօշարակէ²⁰:

Անցյալից մեզ հասել են իաչևուրթյանը նվիրված անհամար երգեր: Նալյանի «Կտակ շարշարանացր» արձակ և շափածո երգախառն մի հուզումնաշատ Բանաստեղծություն է՝ բեմադրության նպատակով գրված. սա է նորը: Պոեմի ընթացքի մեջ տեղ գտած հեղինակային միջարկությունները, պոեմի հատվածների ձայնագրված, խաղաղիր օրինակների գոյությունները, պոեմի հատվածներ, որ այն բեմականացվել է եկեղեցում, թերևս նաև եկեղեցուց դուրս: Բանաստեղծը դրամատիկ, արագընթաց գործողությունների միջոցով հուզականությունը հասցնում է բարձր կետի, ժողովուրդը ողբով, աղաղակով սգում է խաչված որդուն և խաչափայտի ստորև ընկած անշնչացած մորը... ձայնակցում է և բնությունը, շարժվում են տարերքը ու ամենայն հաստատություն. «Արեգակն մերկացաւ, զյոյս իւր լուսին խաւարեցաւ... հաստատութիւն շարժեալ ի ներքոյ, երկիր և սին զողացին, վէժք կործանութիւն իրեանց ի յերկուս պատառեցան, և վարագոյր տաճարին ի վալը ցելաւ»²¹: Նալյանը Քրիստոս որդու, մայր Մարիամի մեջ մարմնավորել է համամարդկային բարձր զգացմունքներ, մոր և

¹⁸ Նույն տեղում, էջ 71:

¹⁹ Նույն տեղում, էջ 43:

²⁰ Բ ա ռ կ ե ն ա թ ո ա կ ի ց կ ա թ ո ղ ի կ ո ս. նշվ. աշխ., էջ 143:

²¹ Ձևո. № 9869, էջ 58բ:

դավակի փոխադարձ, անհուն սիրո գաղափարը: Ընթերցողին է հասնում նրանց սրտառու ժողովրդի, ցավը, առանձին-առանձին.

Այս իս լոյս արև որդեակ,
Իմ հոգույս հոգի դու դավակ...
Պատմեմ և ի յայտ բերեմ,
Որ աշխարհ լինի խիստ տեղեակ...
Ո՛հ թէ լինէր ինձ մէկ ճարակ,
Որդեկորոյս մօրըս անճարակ...—(N 9869, էջ 45ա, 46բ):

սգում է մայրը դառնազին:

Մինչ տեսանեն զքեզ ի լաց,
Եւ ի վերայ զետին թողաց,
Այրի հոգին իմ առաւել,
Քան ցիւտումն բնեռաց:
Հայդ աղաղակն, որ դու կանես,
Եւ ողբալով, որ կու կոչես,
Այնպէս իմոյ, ո՛վ, անո՛յշ մայր իմ,
Թէ իբր նետով զիս կ'սոցես:
Արի, զնա՞, քաղցրիկ մայր ի՞մ,
Զի մի՞ տեսնի սաստիկ մահն իմ,—22

Թախանձում է որդին մորը:

Նալյանի չափաբերականքի մի ուշագրավ մասն էլ կազմում են Նարեկացուն և նրա ստեղծագործությունը նվիրված երգերը: Դարը, ժամանակը, հայոց

22 Մատենադարանի արխիվի կաթողիկոսական դիվանում (թղթապանակ N 101, վավ. N 67ա-գ, էջ 28բ) պահվում է մի ձեռագիր տաղարան, որ տեղ են գտել XV—XVIII դդ. հայ տաղերգուների բաղմամբիվ երգեր: Դրանք թվում է նաև Քրիստոսի խաչելությանը նվիրված՝ «Մարական նուագ առ խաչին աստուած սգացեալ մօրն» խորագրով, «Կայր առ խաչին մայր ցաւագին» սկսվածքով եռատող աներից բաղկացած մի երգի երկու տուն.

Կայր առ խաչին, մայր ցաւագին
Արտասուալից և սգագին,
Մինչ էր ղխաչէ կախեալ որդին:
Զի արդ թախծեալ և տրտմագին
էր Մարիամ երանելին
Մինչ լսէր նա զմայլելին:

Տաղարանի XIX դարի մեկ անձանոթ ընթերցողը այդ երգի վերաբերյալ կարմիր թանաքով թողել է հետևյալ հիշատակագրությունը. «Հռչակաւոր երաժիշտն իտալացոց Ռուբինին այս նուագն իտալացոց լեզուան երգեաց, վասն իմ ի տան իւրում ընդ Վիարդօ Գարցիի, ի 1845 թուին լայցելութեան իմում»: Մենք երկար ժամանակ փնտրում էինք այդ երգի հեղինակին, նայեցինք XII—XVIII դդ. ստեղծված խաչելության բոլոր երգերը և պարզվեց, որ այն պատկանում է Մ. Սեբաստացու գրչին: Տաղը գտնվում է Սեբաստացու «Կրթութիւն աղօթից» գրքում՝ «Երգ առ Սրբուհի կոյսն Մարիամ ցաւագնեալ վասն շարշարանաց միածնի որդւոյ իւրոյ» խորագրով: Այս երգը ունի քսան եռատող տուն և սկզբի հինգ տողը նույնությամբ համապատասխանում են արխիվի տաղարանի վերոհիշյալ երգին: Ո՞վ է այդ նշանավոր հայը, որին 1845 թ. հյուրընկալել է իտալացի հռչակավոր երգիչ Ջովաննի Ռուբինին (1795—1854) և ո՞վ է հայերենից իտալերենի թարգմանել Մ. Սեբաստացու այս երգը, ո՞վ է այդ երգի երաժշտության հեղինակը՝ Մ. Սեբաստացին, թե՞ իտալացի մի այլ երաժիշտ, կամ դուցե Ջովաննի Ռուբինին՝ չգիտենք: Երևութիւնը այնքան ուշագրավ է, իրողությունը՝ հայ-իտալական երաժշտական կյանքի պատմության համար այնքան թանկագին, որ չենք համարձակվում ենթադրություններ անել և թողնում ենք մասնա-գետների քննությանը:

հողերը կյանքը լայն առումով, պարարտ հող էին ստեղծել նարեկացու համամարդկային գաղափարների նոր ծլարձակման. XVIII դարի հայ գրական շարժման նշանավոր գործիչների համար ստեղծագործական ոգևորության մեծ աղբյուր է դառնում նարեկացին, նրա տաղերն ու «Մատենանք»։ Նալյանը այս առումով բացառիկ է՝ իր «Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հրեշտակական վարդապետին» ստվարածավալ քննական աշխատությունը։ Սա սոսկ մեկնությունն չէ, այլ նոր ժամանակների նարեկացիագիտությունը սկզբնավորող մի խոշոր քայլ։ Այս խնդրի քննությունը թողնելով մի այլ առիթի, մեջ բերենք միայն մի փոքրիկ հատված աստվածածնին նվիրված նարեկացու ներբողներից մեկի նալյանական մեկնությունից, գաղափար սալու համար նրա գրաբարալեզու բանաստեղծության արվեստի մասին.

Ի՛նչ է մահ մատենալս ո՛վ կենդանի լոյս,
Փրկեա՛, որ ես ինձ ապաւն և յոյս,
Ի՛նչ դողը հեծութեանս հատցես ի հոգւոյս,
Կամ դաշացո՛ւ լաց բերկրութեան ես բոյս,
Ի՛նչ ըղիսորտակեալս՝ կաղզուրեալ հաստես,
Ըղղեղ կենաց դալդ այնու ճշմարտես,
Ի՛նչ է կործանեալ հոգիս ականածիւս,
Հողելի՛ց ես դու և ականատեսս։

Նկատենք նաև, որ Նալյանը չի բավարարվում հարցերի մեկնությունները լրացնող իր սեփական բանաստեղծություններով, այլ դրանք հաստատում է նաև ընդհանուր և աղգային, հին և նոր աշխարհների, հեթանոսական և քրիստոնեական նշանավոր մտածողների, սուրբ հայրերի, գիտունների, պատմագիրների ու փիլիսոփաների, ինչպես նաև աղգային բանաստեղծների (հատկապես Շնորհալույ) ստեղծագործություններից քաղված օրինակներով։

Նալյանը XVIII դարի գրական նոր լեզվի, աշխարհաբարի ջատագովներից մեկն է, Մխիթար Սեբաստացու, Պաղտատար Դպրի լեզվաշինարական նոր ծրագրերի գործադրողը՝ գիտական-աստվածաբանական, գրական-գեղարվեստական գրականության մարդերում։ Մեծ բարոյախոսն ու բանաստեղծը, գիտնական մանկավարժը, դաստիարակն ու ուսուցիչը, որ այրվում էր ժողովրդի մեջ բնթերցասիրությունը արմատավորելու ցանկությամբ, չէր կարող չըմբռնել այն մեծ դերը, որ կատարելու էր գրական լեզուն՝ իբրև հաղորդակցության միջոց՝ հայոց նոր և ընդհանուր վերանորոգության շարժման մեջ։ «Քանզի այսու աշխարհաբար գիրիմաց շարագրութեամբ լաւ համարեցայ յիմաստեղանդանդսնել,— դրում է նա,— քան թէ պարզամտաց ընթեռնուլ և ոչ իմանալ»²³։ Խորապես գիտակցելով դրոց լեզվի՝ գրաբարի կարևորագույն դերը և լատինաբան դպրոցի աղճատումների դեմ պայքարի հույժ կարևորությունը, Նալյանը գրում է թե՛ գեղեցկաոճ գրաբարով, դասական հայերենով, թե՛ «գրաբար և աշխարհաբար ոճի» խառն, թե՛ ժողովրդի խոսակցական լեզվով՝ աշխարհաբարով, թե՛ հայատառ թուրքերենով։ «Հրուն լեզուն մեր իբրև կորուսանք, վասնի և յօտար լեզուաւ սկսանք խօսել»,— դժգոհում է բանաստեղծը։ Քանզի «բաղումք են յազգիս մերում զհայոց լեզուն յիրեանց չգիտեցող, որք միշտ յաղբիւրն ծարաւի ընթանան և ծարաւի դառնան»²⁴։ Ազգային լուսավորության ընդհանուր գործը առաջ մղելու, թուրքախոս հայությանը խսկառ օտարացումից ետ պահելու նպատակով է, որ Նալյանը գրում է նաև հայատառ թուրքերենի բաղձառեմսակ երկեր։

23 Հ. Ն ա լ յ ա ն. Գիրք մեկնութիւն աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հրեշտակական վարդապետին. Կ. Պոլիս, 1745, էջ 612։

24 Հ. Ն ա լ յ ա ն. Գիրք կոչեցեալ ըրիստոնէական. Կ. Պոլիս, 1747, էջ 4։

25 Հ. Ն ա լ յ ա ն. Գիրք կոչեցեալ Ձէն հողերո. Կ. Պոլիս, 1787, էջ 188։

Այսպես, ուրեմն, Նալյանն իր կրոնական, թե աշխարհիկ, գրական թե աստվածաբանական, գեղարվեստական՝ արձակ թե չափածո երկերով ներկայանում է իբրև XVIII դարի վերանորոգվող գրական, մշակութային ընդհանուր շարժման ամենանշանավոր դեմքերից մեկը:

АКОП НАЛБЯН И ЕГО ПОЭЗИЯ

Доктор филол. наук Ш. Л. НАЗАРЯН

Резюме

Свою бурную просветительскую деятельность Акоп Налбян развертывает в Константинополе (1741—1764 гг.), в основном в трех направлениях: учебно-образовательно-воспитательном, издательско-типографском и научно-литературном. Значительная часть многотомных оригинальных и толковательских произведений А. Налбяна не исследована. В истории армянской литературы почти не упоминается имя Налбяна-поэта. Однако современникам Налбян был хорошо известен как крупный деятель-народолюбец, философ-теолог и поэт. Поэтическое наследие Налбяна содержит сотни двустиший, четверостиший, многочисленные поэмы, оды, притчи. Среди них достойны особого внимания произведения, отражающие социально-экономические отношения того времени, а также назидательные песни к стихотворениям, посвященные Напекаци и его «Книге скорбных песнопений».